զաքին և առ Բդեշխն եւս, եւ ընդ աղետին իւրոյ առաջի արար նոցա զգրեանս և զհրովարտակն Սէլիմայ Արքային. և խնդրեաց 'ի նոցանէ դիւր առնել սակաւ ինչ 'ի տառապանաց, որ ծանրանայր գամ քան զգամ 'ի վերայ իւր և իւրոցն, եւ նոքա յանձն առին դրել եւ ծանուցանել 'ի Դուռն զտառապանս նորին, և խնդրել յԱրքայէ հրովարտակաւ բառնալ զամենայն խոչս՝ զորս պատմեաց նոցա. իսկ դատաւորն յաւել 'ի գրի իւրում, թէ Հայք տաղտկացեալ են յերեսաց բռնութեանց այլազգեաց, եւ խորհին թողուլ և լքանել զվանօրայս եւ զբնակութիւնս իւրեանց, եւ մեկնեալ ասի գնալ տարադէպ, ուստի հասանէ ինաս մեծ դասուց գիտնականաց, զոր կարգեալ է Սիւլէյման Արքայ ընթեռնուլ զկուրանն վասն հոգւոյ հօր իւրոյ Սէլիմայ, զի տարեկան հասք նոցին ելանէ 'ի վանօրէից անտի։ Ի հասանիլ գրոյն 'ի թադաւորեալ քաղաքն և 'ի ծանուցանել Սուլթան Իպրահիմայ. գրեցաւ հրովարտակ (Խաթթի Շէրիֆ) բառնալ զանկարգութիւնս այլազգեաց, և չպահանջել ումեք 'ի նոցանէ և ոչ դանկ մի. յանդորրու պահել զՊատրիարքն և զմիաբանս Հայոց, որպէս եւ էինն յառաջագոյն. 'ի վերջ Զիլհիճէ, ١٠٥٤ (1644)։

Զկնի երկուց ամաց եկաս հրովարտակ յԱրքայէ յԵրուսաղէմ, վասն խնդրոյ այրին Ծննդեան, զորմէ գրեցաք յառաջագոյն, առեալ զայն Գրիգորի Պատրիարքի չոքաւ առ դատաւորն, ուր էր եւ իշխող քաղաքին Մէհէմմէտ Փաշայ, կազմեցաւ ժողով մեծ 'ի դատարանն՝ կոչեցան փոխանորդն Լատինաց Պետրոս եւ թարգմանն Ցունաց Իպրահիմ, և ընթերցաւ հրովարտակն առաջի ամենեցուն, և խնդրեաց նորին բացատրեալ ծանուցաւ 'ի ձեռն թարգմանի՝ փոխանորդին Լատինաց, և նա հնազանդեցաւ հրամանին։ Ապա եհարց դատաւորն զթարգմանն Ցունաց, եթէ ունի՞ք ասել զոյլ հրաման նոր թուականաւ հակառակ այսմ, մատո՛ այսր, և նա արար պատասխանի թէ ոչ ունին. սակայն Հայք ասէ՝ չունին իրաւունս պատարագելոյ խնկարկելոյ և կանթեղս լուցանելոյ յայրն Ծննդեան։ Առ որ իբր պատասխանի մատոյց Գրիգոր առենին զառաջին գրեանս՝ զորս պատրաստ ունէր առ իւր, յորոց յայտնի